ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19 հունվարի 2015 թվականի թիվ 5 - Ա

«ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ԹԻՎ 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԻՆԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մարտի 4-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին» N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1)-ին ենթակետով՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Մինչև մրցույթով տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելը, 2015 թվականի հունվարիի 19-ից «ՀՀ Տավուշի մարզի Իջևանի թիվ 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պարտականությունները դնել նույն դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Նինա Պողոսյանի վրա:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2015թ.հունվարի 19
ք.Իջևան